Մամուլի հաղորդագրություն

ՀՀ Վայոց ձորի մարզպետն ամփոփում է 100-օրյա պաշտոնավարման և մարզպետարանի 2014թ. գործունեության արդյունքները

Վայոց ձորի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության հարավարևելյան վերջույթում:
Մարզկենտրոնը՝ ք. Եղեգնաձոր
Տարածաշրջանները՝ Վայք և Եղեգնաձոր
Քաղաքները՝ Եղեգնաձոր, Ջերմուկ և Վայք
Տարածքը՝ - 2308 քառ. կմ
Բնակչության թիվը -52400
քաղաքային - 18500 /35,3%/
գյուղական - 33900 /64,7 %/
Համայնքների թիվը՝ 44, որից քաղաքային՝ 3, գյուղական՝ 41:

ՀՀ մարզերի շարքում տարածքի մեծությամբ գրավում է միջին տեղ, իսկ բնակչության թվով ամենափոքր մարզն է: Մարզը զբաղեցնում է 2308քառ.կմ մակերես, հյուսիսից սահմանակից է Գեղարքունիքի մարզին, հյուսիսարևելքից՝ ԼՂՀ ին, հարավարևելքից՝ Սյունիքին, հարավից՝ Նախիջևանի Հանրապետությանը (Ադրբեջան), արևմուտքից՝ Արարատի մարզին: Վայոց ձորը բնակատեղի է եղել վաղնջական ժամանակներից:

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը պաշտոնավարման 100 օրվա ընթացքում այցելություններ է կատարել մարզի 20 համայնքներ, կրթական, մշակութային, առողջապահական հաստատություններ և տեղում ծանոթացել տիրող իրավիճակին: Հանդիպումների ընթացքում արձանագրացված հարցերի շուրջ կազմակերվել են քննարկումներ, խնդիրների լուծման համար հանձնարարություններ են տրվել մարզպետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներին: Կրթական և առողջապահական հաստատությունների ղեկավարների հետ հանդիպումներում քննարկվել են ոլորտներում տիրող իրավիճակը, խնդիրների լուծման հնարավորությունները: Քննարկումներ են կազմակերպվել մարզի տարածքում խմելու և ոռոգման ջրի, էլեկրաէներգիայի անխափան մատակարարման, անտառպահպանման և բնապահպանական այլ խնդիրների շուրջ: 2014թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին մարզպետի մոտ ընդունելության են եկել մարզի տարբեր համայնքների շուրջ 211 քաղաքացիներ:

Հաշվետու ժամանակահատվածում բանակ-ընտանիք-հասարակություն կապի խորացման ու ամրապնդման նպատակով իրականացվող ծրագրի շրջանակում կազմակերպվել է ՀՀ ՊՆ1-ին, 3-րդ բանակային կորպուսի ժամկետային զինծառայողների ծնողների հանդիպումը հրամանատարների և իրենց զավակների հետ: Հարություն Սարգսյանը ամանորյա տոների կապակցությամբ 2014 թվականի դեկտեմբերի 29-ին ՀՀ ԱԺ նախագահ Գալուստ Սահակյանի, իսկ դեկտեմբերի 30-ին ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանի հետ այցելել է Վայոց ձորի մարզում գտնվող սահմանապահ հենակետեր:

Հաշվետու ժամանակահատվածում մարզպետը մասնակցել է ՀՀ վարչապետի, և ՀՀ ՏԿԱԻ նախարարի մոտ կազմակերպված ՀՀ մարզերին վերաբերող խնդիրներին նվիրված խորհրդակցություններին: Քննարկված հարցերի շուրջ խորհրդակցություն է անցկացրել մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարիների մասնակցությամբ, որոնց ներկայացրել է քննարկվող հարցերի շրջանակները և տվել համապատասխան հանձնարարականներ: Մարզպետը նշված ժամանակահատվածում մասնակցել է մարզում իրականացվող կրթական, մշակութային, մարզական միջոցառումներին և տոնական օրերի կապակցությամբ ուղերձներով շնորհավորել մարզի բնակիչներին:

Մարզին պետբյուջեից ֆինասավորումը կատարվել է ամբողջական, որից 2520549.84 հազար դրամ ծախսվել է կրթության ոլորտում: Նշված ոլորտի կարևորագույն ձեռքբերումներից են 2014 թվականի սեպտեմբեր ամսից <<Դպրոցական կայուն սնունդ>> ծրագրի իրականացումը պետական ֆինասավորմամբ, նաև 2014-2015թթ. ուսումնական տարում մարզի դպրոցների առաջին դասարաններ հաճախող աշակերտների թվի ավելացումը շուրջ 63 աշակերտով:

-Մշակույթի ոլորտին հատկացվել է 19995.4 հազար դրամ, որից պետական աջակցության մշակութային միջոցառումների իրականացման համար հատկացվել է 4938.5 հազար դրամ:

-Մարզային առողջապահական հաստատությունների ֆինանսավորման համար հատկացվել է 585837.4 հազար դրամ: Մատուցվել է 38807.1 հազար դրամի վճարովի բժշկական ծառայություններ: Սոցիալական ոլորտի ձեռքբերումներից է նաև ինտեգրված սոցիալական ծառայությունների մատուցման համակարգի ներդրմանն ուղղված աշխատանքները: Աշխատանքներ են տարվում Եղեգնաձորի պոլիկլինիկայի շենքում հատկացված տարածքի վերանորոգման նպատակով մարտ ամսին նախատեսված նախագծման գործընթացի կազմակերպման ուղղությամբ:

-Մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանման, ընթացիկ պահպանման և շահագործման նպատակով հատկացվել է 65422.0 հազ.դրամ, իսկ պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման ծրագրով հատկացել է 65422.0 հազ. դրամ:

-ՀՀ Պետական բյուջեով նապատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից մարզին հատկացվել է 150209.0 հազար դրամ, փաստացի ֆինանսավորվել է 146782.64 հազար դրամ, իսկ մրցույթի արդյունքում խնայված 3426.64 հազար դրամ վերադարձվել է պետական բյուջե:

-2014 թվականին լուծվել է նաև մարզում արտադրված գյուղմթերքների իրացման հարցերը, առանձնապես՝ խաղող՝ 5111տ., պտուղ-հատապտուղ 5443 տ, միսէ 5594տ, կաթ՝ 25462 տ, բանջարեղեն՝ 7658տ, ձու՝ 30,5 մլն հատ:

Մարզի 44 համայնքների բյուջեներին ամրագրված սեփական եկամուտների հավաքագրումը կատարվել է 108.7%-ով: ՀՀ 2014 թվականի պետական բյուջեից համայնքների հատկացված դոտացիան եղել 827689.0 հազար դրամ, ֆինասավորվել է 100%-ով, աճը 2013 թվականի համեմատ կազմել է 11.0 %:

ՀՀ Կառավարության որոշմամբ 2015 թվականին փոխհատուցվում է մարզի սահմանամերձ Բարձրունի, Խաչիկ, Խնձորուտ, Նոր Ազնաբերդ և Սերս համայնքների բնակիչների կողմից ծախսած ոռոգման ջրի վարձավճարի 50 տոկոսը, էլ.էներգիայի վարձավճար՝ հաշվարկային տարում մինչև 1440 կվ/ժ քանակության համար գանձվում է դարձյալ 50 տոկոսի չափով: Քանզի նշված համայնքները գազաֆիկացված են, գազի գնի համար նախատեսված գումարը փոխանցվում է որպես էլ.էներգիայի վարձավճար:

Զբոսաշրջության զարգացման ուղղությամբ մարզում կատարված քայլերը, այդ առումով Ջերմուկ քաղաքը շահեկան իրավիճակում է, քանզի մշակվել է միջազգային ստանդարտներով քաղաքի զարգացման ռազմավարական ծրագիրը: Մ <<Հայաթ>> հյուրանոցային ցանցի կողմից 2015 թվականին կշահագործվի առաջին բրենդային հյուրանոցը, որի առկայությունը առողջարանային քաղաքում կարելի է համարել լավագույն բիզնես նախագիծ, քանզի միջազգային բրենդային այդ հյուրանոցը քաղաք ժամանած զբոսաշրջիկներին կմատուցի առողջարանային և բուժական բարձր կարգի ծառայություններ: